

ինչպէս եւ Աքեայի կոմսութիւնն ու Կիպրոսի թագաւորութիւնը. վերջիններս՝ չորրորդ Անգլիայի թագաւոր Ռիչարդ Ա-ի, որ մի եւ նոյն տարւան մէջ (1191) թէ՛ Աքեան եւ թէ՛ Կիպրոս կղզին գրաւելով՝ Կիպրոսը ծախեց նախ Տաճարականներու եւ ետքէն Երուսաղէմի գահազիրկ թագաւոր Գուլտան Լուսինեանի (1):

Պարոն Կոստանդին այն համոզումով որ Յոանկներու հետ յարաբերութիւն մշակելն եւ մանաւանդ խնամութիւն հաստատելը կրնայ օգտակար ըլլալ իրեն եւ իր նորահաստատ իշխանութեան, իր աղջիկը տուաւ Եգեսիայի կոմս ձոսլին Ա-ին (Josselin de Courtenay). իսկ եղբայրը — Թորոս — այս օրինակին հետեւելով՝ իր Արտա անուն աղջիկը կարգեց Երուսաղէմի ապագայ թագաւոր Պաղտինի (Baudouin de Boulogne) հետ, որ ինչպէս իրենքու բանակին առաջնորդ Կոնդոփրէի (Godefroy de Bouillon) եղբայրն էր: Ահա այսպէսով առաջին խնամութիւնը կապուեցաւ Երուսաղէմի եկող կաթողիկ ինչպէս իրենքու հետ: Անկէ ետքը սովորական բան մը դարձաւ իրարու աղջիկ տալ-առնելը (2):

Գալով Լուսինեաններու հետ խնամութեան, այս բանը կատարուեցաւ Լեւոն Ա Մեծագործ թագաւորի (1186—1219) կրկնորդ ամուսնութեամբ:

Լեւոն Ա-ի (3) քոյրը՝ Տալիթա՝ արդէն ամուսնացած էր Bertrand de

(1) Ի բուրն « Ոնո (= 1191). Կի թագաւորն Երուսաղէմի զնեաց զԿիպրոս կղզի ի թագաւորէն Անգլիկաց », կրսէ Հեթում Պասմիշ իր *Ժամանակագրական Յանկին* մեջ: Տես եւ Mas Latrie, *Hist. de l'Île de Chypre*. Paris, 1861, հս. Ա, եր. 37, հս. Բ, եր. 8, եւ ուրիշ տեղեր:

(2) Յաւալի է, որ մեր երանելի նախնիք չափազանցութեան սանելով օտարներու հետ խնամութիւն հաստատելու մոլութիւնը, մինչեւ իսկ դասապարտելի ամուսնութիւններ կնքած են . . .

(3) Մենք «Լեւոն Ա» կրսենք այս թագաւորին, նկատելով որ նախորդ Լեւոնը (որդի պարոն Կոստանդինի) սոսկ «Պարոն» էր, թագաւոր պսակուած չէր: Կիլիկիայի հայկական հարսութեան առաջին թագաւորն է՝ այս Լեւոնը, զոր ուրիշներ «Լեւոն Բ» կանուանեն սխալ գործածութեան մը հետեւելով: — Լեւոն Ա քեւ 1186-ին իր Ռուբեն (Գ իշխան) եղբոր յաջորդեց իբրեւ իշխան, սակայն ասանակ սարիներ վերջը միայն թագաւոր պսակուեցաւ եւ օձուեցաւ:

* Ոմանք հաշուի չեն առնել Ռուբեն Բ մանկիկը, որ Թորոս Բ-ի որդին և յաջորդն